կա զանազան խնդիրներ եւ Հայոց Յեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին առնչվող հարցեր:

Հանդիպումից հետո տեր եւ տիկին Պերճ եւ Վերա Սեդրակյանները ծանոթացան Ս. Էջմիածնում ընթացող լայնածավալ շինարարական, այդ թվում՝ Սեդրակյան ամուսինների ազնիվ բարերարությամբ իրականացվող Հին Վեհարանի հիմնանորոգության եւ վերակառուցման աշխատանքներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻՏՎԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հունիսի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիտվայի Հանրապետության Ազգային պաշտպանության նախարար տիկին Ռասա Յուկնեւիչիենի գլխավորած պատվիրակությունը:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ Հայաստանի եւ Լիտվայի միջեւ առկա են բարեկամական հարաբերություններ, որոնք տարեցտարի ավելի են սերտանում եւ բազմաբնույթ ընդգրկում ստանում: Նորին Սրբությունը մասնավոր գոհունակություն հայտնեց երկու երկրների Պաշտպանության նախարարությունների միջեւ ձեւավորվող համագործակցության առիթով:

Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրերին ներկայացրեց հայ ժողովրդի կյանքում թե՛ պատմության ընթացքում եւ թե՛ այսօր Եկեղեցու ունեցած դերակատարությունը՝ մասնավորապես անդրադառնալով քրիստոնեական արժեքների եւ ժողովրդի քրիստոնեական նկարագրի անաղարտ պահպանման համար Եկեղեցու գործադրած ջանքերին:

Իր հերթին տիկին Յուկնեւիչիենին նույնպես կարեւորեց քրիստոնեական արժեքների եւ Եկեղեցու դերակատարությունը հասարակության կյանքում՝ այս առնչությամբ հիշատակելով նաեւ խորհրդային տարիներին եղած արգելքները:

Հանդիպմանը մասնավոր անդրադարձ կատարվեց բանակում հոգեւոր սպասավորների կարեւոր ծառայությանը եւ այս կապակցությամբ երկու երկրների փորձառությանը:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խնդրի, երկու երկրների հոգեւոր կյանքի, Քույր եկեղեցիների ու այլ կրոնների հետ Հայ Եկեղեցու հարաբերությունների մասին:

Հանդիպմանը ներկա էին ՀՀ Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանը, ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը եւ ՀՀ-ում Լիտվայի Հանրապետության լիազոր եւ արտակարգ դեսպան Գեդրիուս Ապուոկասը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ավստրիայի նախագահը Մայր Աթոռում

Լիտվայի Ազգային պաշտպանության նախարարը Ս. Էջմիածնում